


ՀՈՎԱ. ԹՈՒՄԱՆ ՁԱՆ



ՅԵՐԳ ԳԵՐ

891 · 995
Պ - 95

I

891.990

р-95

lur

ԹՈՒՐԱՎԵԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

2011 - 05

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԳԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

Գ Ե Տ Հ Բ Ա Տ
ՀԱՅԵՐ ԿԿ ԿԻՑ ՄՈՇՆԱՌԱՆՆԵԿԵՐԿԱՆ ԳՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

1988

17 APR 2014

8914

Ա Ռ Ա Վ Ո Տ

Համլը խոսեց յերեք բերան,
Ե՞լ քնածնե՛ր, ծուղուղո՛ւ,
Բացվեց կարմիր աղոթարան,
Ժամանակ ե զարթնելու:

Խամփարն անցավ գիշերալին,
Հեռու մեղնից ու փարատ,*
Աշխարհ լցվեց լուսն ու բարին,
Լուսն ու բարին անարատ:

Գյուղում աղմուկ, գյուղում խնդում,
Որը պայծառ, բուրավետ,
Փիր մըշակի յերգը հանդում
Զընգում ե գործի հետ:

БІБЛІОТЕКА
Академії Наук
У Р С Р

0052449



8479-57

*) Զատկան, հեռում

БІБЛІОТЕКА
Академії Наук
У Р С Р

ԳԱՐՆԱՆ ՀՐԱՎԵՐ

ԿԱՆԱՆՉԱԿԻ

Ե՞ր կանանչ ախպեր,
Ե՞ր ճանանչ ախպեր,
Արի, քեզ հետ բեր
Արեի շողեր,
Բե՛ր անուշահոտ
Ծիլ ծաղիկ ու խոտ,
Կարկաչուն վըտակ,
Յերկինք կապուտակ,
Խատուտիկ հավքեր,
Զըրնգան յերգեր,
Գառների մալուն,
Խաղ, ուրախություն.
Ե՞ր կանանչ ախպեր,
Ե՞ր ճանանչ ախպեր:

Բացգում են գարնան
Որերը պայծառ,
Լըդմա, իմ ընկեր,
Գնանք դեպի սար,
Գնանք դեպ ախտեղ, յերկինաս վերի,
Լիանքը լալնարձակ, յերկինք ու արեգ...
Փրթթում են գարնան
Ծաղկունքը վառ—վառ,
Վե՛ր կաց, վե՛ր, ընկե՛ր,
Յելնենք դեպի սար,
Հազար զույներով, հաղար, հաղար ցեղ
Ժըպտում են նրանք ու բուրում ալնտեղ...
Կանչում են գարնան
Հավքերն անհանար,
Գնանք, իմ ընկե՛ր,
Թոշենք դեպի սար,
Յերգենք նրանց հետ, յերկինաս վերի,
Լիանքը լալնարձակ, ծաղիկ ու արեգ...

ԱՄԱՌՎԱ ԳԻՇԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Լուսընկամ գիշեր,
Յերկինքը պայծառ,
Անհամար աստղեր
Ցոլցլում են վառ:

Քընած ե արդեն
Հովտի մեջ գյուղը,
Մըմնած ու լուռ ե
Գյուղացու հյուղը:

Հոնդած գյուղական
Բնաւանիքն ահա
Մըմնում, կալում
Կամ կըտրի վրա

Խոնջացած որվան
Դառն աշխատանքից,
Վոտնուծոց արած,*
Քնած են հանգիստ:

Միան աղմկում՝ ե
Ալս լոռությունը
Գյուղացու սալլի
Խուլ ճռնչյունը:

*) Գյուղերում այն ժամանակ վերմակի սակավության
պատճառով մի վերմակի տակ պառկում ելին ալս և հակառակ
կողմերից:

ԿԱԼԻ ՅԵՐԳ

(Լոռեցոնց)

Կալ արա, գնանք,
Ա՛ յեզը ջան,
Հորովե՛լ
Հո՞քո՞վելա՛:

Արի՛, ման արա,
Ալ քեզ մեռնեմ,
Դարման արա,
Դադեզ առնեմ:

Վոտիդ արա,
Վոտիդ զուբբան,
Ուսիդ արա,
Ա՛ տխալեր ջան:

Ելել ա, ելել,
Կալն ելել ա
Հարել ես, հալել,
Հորովելար:

Ա Շ Ն Ա Ն Վ Ե Ր Զ Ը

Սարի լանջին,
Մեղի միջում
Խոխոջում ե
Աւ տըրտընջում
Զուրը բարակ,
Զուրը տըխուր,
—վաշ-վիշ, վաշ-վիշ
Ո՞ւր կորան, ո՞ւր,
Տերհ ու խոտ,
Վարդը շաղոտ,
Սարվորն ուրախ,
Ոլրինդ ու խաղ:
Շորջու դատարկ,
Շորջու տըխուր...
Վաշ-վիշ, վաշ-վիշ,
Ո՞ւր կորան, ո՞ւր:

ԱՄՊՆ ՈՒ ՍԱՐԸ

Ամպը յեկավ նստեց սարին,
Նստեց սարի սուր կատարին:
—Լըսի՛, պա՛ղի, ասավ նրան,
Լավ որերըդ անցան, կորան.
Խիստ, սոսկալի
Յուրա ե զալի:
Ասավ, զնաց:
Սարը կամաց
Մտավ սպիտակ
Վերմակի տակ:

ԳԵՏԱԿԸ

ՔԱՄԻ

Ու—ու—ու..
Թամին ե, քամին,
Տես անդգամին.
Բերան չունի՝ վիշում ե,
Թեեր չունի՝ թըռչում ե,
Չեռքեր չունի՝ քաշում ե,
Ի՞ն փոքրիկին քշում ե:
Կորի՛, զու քամի,
Անպիտան քամի:
Մի վախի, ջանիկ,
Փեշս պինդ պահի,
Յես թող չեմ անի,
Քամին քեզ տանի:

— Ուր ես վաղում
Այդպես արագ,
Մ՛տ, զու կայտառ,
Սիրուն գետակ,
Կանդ առ, խարանք
Ես ծառի տակ:
«Զե՛, փոքրիկը,
Գնամ պիտի.
Տես ջաղացը
Փլուղի մոտի.
Պետք ե ուժ տամ,
Վոր պլուղակ:
«Ճաճնել հովտում
Անուշահոտ
Ինձ են մնում
Ծաղիկ ու խոտ.
Հոգնած ծարագ
Տավարն ու հոտ:
Դե՛, տեսնո՞ւմ ես,
Մնա՞ս բարով.
Ճամփաս ցանած
Հազար դործով,
Դադար չունեմ
Յես մինչև ծով»:

ԿՈՒՅՏ ԱՇՈՒՂԸ

Կույր աշուղը մի տան բակում
Յեկել նստել լերդ և յերգում,
Յերգում եռ ու սաղին տալի
Ենակես տխուր, մղկտալի:
«Ել պարոններ, երնեկ նրան,
Ով տեսնում եռ ամեն որ
Կապույտ յերկինք, արեի լույս
Ու յերեսը իրեն մոր»:
Յերգում եռ ու սաղին տալի
Տխուր — տխուր, մղկտալի:

ՄԱՆԿԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ

bչ

1. Առավոտ	3
2. Կանանչ ախոլեր	4
3. Փարնան հրավեր	5
4. Ամառվա գիշերը դյուդում	6
5. Կալի յերդ	7
6. Ազնան վերջը	8
7. Ամպն ու սարը	9
8. Քամի	10
9. Գետուկը	11
10. Կույր աշուղը	12



Պատ. իսկ. Եղ. Թումանյան
Տեխ. իսկ. Ան. Գասպարյան
Արքադրիչ թ. Հովակիմյան

Դլավիսի Լվազոր. Կ 3507 Հրամ. 4375
Պատվեր 1289. Տիրամ 6000.
Թուղթ 74×110 տպ 1/2 մամուլ. Մեկ
Մամ 40960 նիշ. Հեղինակալին 1/2 մամ
Հանձնված և արտադրության
2 գեկտ. 1937թ. ստորագրված և 9 հուն.
Տպագրության հունվարի 1938թ.
Գետիքամի տելալան, Յեղիան,
Լենինի փող 65
Գլու 50 կ.

47540

252



8914

LB059449



ОГУМАН
БЕСНИ
1913